



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրոպական միության կողմից

Ծրագիրը
համաֆինանսավորվել է
ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների
հայկական
ասոցիացիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի ազատության
կենտրոն

Իրականացնող՝
«Հայկական
սահմանադրական
իրավապաշտպան
կենտրոն» ՀԿ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԿՐՎՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՔՍԱԶԵՐԾՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՄԿԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ»

ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում» ծրագիրը իրականացրել է «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,924,000 ՀՀ դրամ, որից 1,328,000 ՀՀ դրամը տրամադրվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

ք. Վանաձոր

2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Ծրագրի անվանումը՝	«Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում»
Իրականացնող կազմակերպություն՝	«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» (ՀՄԻԿ) ՀԿ
Ենթադրամաշնորհատու կազմակերպություն՝	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» (ԻՀԱ) ՀԿ
Տևողությունը՝	2016թ. ապրիլի 1- 2016թ. հուլիսի 31
Զեկույցի ներկայացման օրը՝	2016թ. օգոստոսի 29

1. Ծրագրի իրականացման նախադրյալները

Ծրագրի խնդիրն էր այն, որ ՀՀ Կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ԿԱ ՊԵԿ) «Նորագավիթ» ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատունը (այսուհետ՝ Ավտոմաքսատուն) խոչընդոտում է ֆիզիկական անձանց, փոքր և միջին գործարարների կողմից ներկրված տրանսպորտային միջոցների՝ գործարքի գնի մեթոդով հայտարարագրումը: Խոշոր գործարարների համեմատ՝ նրանք տնտեսական անհավասար մրցակցության պայմաններում են և հարկադրված են զգալիորեն ավելի մեծ գումարներ վճարել, քանի որ Ավտոմաքսատան տեսուչները նրանց ներկայացրած վճարային փաստաթղթերը հայտարարելով անարժանահավատ՝ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքը որոշում են ըստ ներկրվող ապրանքի շուկայական գնի, այլ ոչ թե ըստ փաստացի կատարված, փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (գործարքի գնի մեթոդ):

Ծրագիրը նպատակ ուներ՝

1. պարզել Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը և դրանց նվազեցման վերաբերյալ հիմնավորված առաջարկներ մշակել և ներկայացնել ՀՀ Կառավարությանը և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին:
2. բարձրացնել շահառուների իրազեկությունը խնդրի վերաբերյալ:

Ծրագրային հայտը սկզբնապես ներկայացվել էր «Վանաձորյան խճանկար» շաբաթաթերթի հետ գործընկերությամբ: 2016թ. ապրիլի 22-ին շաբաթաթերթի խմբագիր Ա. Միմիկյանը Իրավաբանների հայկական ասոցիացիային ուղղված գրությամբ, դադարեցրել է ծրագրին շաբաթաթերթի մասնակցությունը: Ասոցիացիան քննելով հարցը, Ենթադրամաշնորհային պայմանագրում կատարել է հետևյալ փոփոխությունները.

1. Հնարավորություն է տվել ՀՄԻԿ-ին շարունակել ծրագրի իրականացումը,

2. Ստանձնել է շահառուների իրազեկության բարձրացման որոշակի գործառույթ՝ iravaban.net-ում հրապարակելով ծրագրի տեղեկատվական նյութերը, հարցազրույցները:
3. Ծրագրի գործողության ժամկետը երկարաձգել է մեկ ամսով:

2. Իրականացված ծրագրային գործողությունները

Իրականացվել են հետևյալ գործողությունները.

1. Ընտրվել և կազմավորվել է 5 անձից բաղկացած աշխատակազմ (*հավելված 1*), որի կազմով շաբաթական մեկ անգամ, հիմնականում ուրբաթ օրերին, հրավիրվել են աշխատանքային խորհրդակցություններ, ուր քննարկվել են ծրագրի իրականացման ընթացիկ հարցերը:
2. Պատրաստվել են աշխատանքային-գործավարական փաստաթղթերի, այդ թվում՝ պայմանագրերի, շաբաթական պլան-հաշվետվությունների, ստորագրաթերթիկի ձևերը (*հավելվածներ 1,2*):
3. Կնքվել են աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրեր աշխատակազմի անդամների և անհատ ձեռնարկատերերի հետ (*պայմանագրերը ներկայացված են ֆինանսական հաշվետվությանը կից փաթեթում*):
4. Իրազեկման և համագործակցության առաջարկ-նամակներ են պատրաստվել և առաքվել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահին և Ավտոմաքսատան տնօրենին (*հավելված 3*): Փոստային և էլեկտրոնային որոշ նամակագրությունից (*հավելվածներ 4,5,6*) հետո ՊԵԿ-ը սկսել է համագործակցել Կոմիտեի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակից **Սևակ Մանուկյանի** միջոցով: Ավտոմաքսատունը, ցավոք, անպատասխան է թողել մեր գրությունները, «համագործակցելով» բացառապես միջնորդավորված, իր վերադաս ՊԵԿ-ի՝ նույն աշխատակցի միջոցով:
5. «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոնի (տնօրեն՝ Ահարոն Ադիբեկյան) հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա վերջինս իրականացրել է հանրային կարծիքի սոցիոլոգիական հետազոտություն՝ վեր հանելով ավտոմեքենաների մաքսազերծման ոլորտում առկա որոշակի կոռուպցիոն ռիսկեր և կատարել համապատասխան հակակոռուպցիոն բարեփոխումների առաջարկներ: Սոցիոլոգիական հետազոտության զեկույցը տպագրվել է ՀՄԻԿ-ի «Վասն Արդարութեան» գիտական հանդեսի 73-րդ համարի **Հավելվածում** (*հավելված 7, էջ՝ 5-16*):
6. Լրագրողական դիտարկումներն անցկացվել են Ավտոմաքսատան տարածքում և շահառուների հետ հանդիպումների ընթացքում: Կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա «ՀՀ Ժուռնալիստների միության» անդամ, լրագրող **Վահագն Անտոնյանը** կատարել է ձայնագրություններ, անցկացրել հարցազրույցներ Ավտոմաքսատան տնօրեն Բ. Ղազարյանի <http://iravaban.net/130987.html>; <http://acrpc.am/index.php?action=post&id=22> , մաքսային տեսուչների, բրոքերների, շահառու՝ Երևանի բնակիչ Գևորգ Մելիքյանի <http://acrpc.am/index.php?action=post&id=23> (*հավելվածներ 8,9*) հետ:

7. Անցկացվել է անանուն հարցախույզ Survey Monkey առցանց համակարգով (<https://ru.surveymonkey.com/r/L9T7FPB>) և հարցաթերթիկներով (*հավելված 10, ենթահավելվածներ՝ թվով 17 լրացված հարցաթերթերը կցվում են*): Հարցաթերթիկները տարածվել են ՀՄԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի, iravaban.net-ի, կամավորների և շահառուների միջոցով (*հավելված 11*):

8. ՀՄԻԿ www.acrpc.am կայքէջի՝ որպես շահառուների իրազեկության բարձրացման գործիքի նորացումը պատվիրվել է ծրագրավորող **Մուրադ Աբգարյանին**՝ նրա հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա: Նորացված կայքում կազմակերպվել է «*Կոռուպցիան Ավտոմաքսատանը*» վերնագրով թեմատիկ առցանց <http://acrpc.am/index.php?action=forum&id=4> քննարկում (*հավելված 12*): Քննարկման մասնակիցները կարծիքներ են փոխանակել և կատարել հակակոռուպցիոն բարեփոխումների առաջարկներ, առանձնապես կարևորելով շահառուների իրազեկության բարձրացման անհրաժեշտությունը:

9. Խմբագրվել, սրբագրվել եւ «Վան Արյան» տպագրատան կողմից հրատարակվել է «Վասն Արդարութեան» գիտական հանդեսի 73-րդ համարի Հավելվածը (*հավելված 7*), որը ներառել է *Հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանն ուղղված առաջարկներ մշակելու համար սոցիոլոգիական հետազոտության հաշվետվությունը և Լրագրողական դիտարկումների, հարցախույզի և առցանց քննարկումների արդյունքների ամփոփիչ զեկույցը*:

10. 2016թ. հուլիսի 29-ին, Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում կազմակերպվել է ամփոփիչ Կլոր սեղան-քննարկում: Ըստ օրակարգի (հավելված 13) ողջույնի խոսքերից հետո սոցիոլոգիական հետազոտության արդյունքները ներկայացրեց «ՍՈՑԻՈՄԵՏԸ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի տնօրեն **Սհարոն Աղիբեկյանը**: ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ **Մհեր Մարտիրոսյանը** ներկայացրեց Ավտոտրանսպորտային միջոցների մաքսագերծման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ իրավիճակը, ինչպես նաև պատասխանեց բարձրացված հարցերին: Լրագրողական դիտարկումների, հարցախույզի և առցանց քննարկումների ամփոփիչ զեկույցը ներկայացրեց ՀՄԻԿ ՀԿ նախագահ **Գևորգ Մանուկյանը**:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության տնտեսական և հանրային կառավարման բարեփոխումների գծով խորհրդատու **Ալեսանդրո Զանոտտան** ողջունելով մասնակիցներին, ընդգծեց միջոցառման կարևորությունը՝ նշելով, որ պետական մարմինների ունեցած արդյունքները՝ ՀՀ քաղաքացիների համար օգտավետ բարեփոխումների հասնելու առումով, կարևոր են Եվրոպական միության համար: Նա ավելացրեց, որ հանդիպման արդյունքների մասին կզեկույցվի ԵՄ-ին և վերջինս հետագայում կշարունակի գործընթացի առաջխաղացման դիտարկումը: Ի հավելումն, պարոն Զանոտտան ընդգծեց, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կառավարության՝ ներկայիս հակակոռուպցիոն համագործակցության հարթակը լավագույն ֆորմատն է՝ Հայաստանում արդյունքների հասնելու համար, և հաջողություն ունենալու դեպքում այս փորձն ուսանելի կլինի այլ երկրների համար:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Կարեն Զադոյանը** ողջունելով մասնակիցներին, ասաց, որ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջիկա նիստի ժամանակ քննարկելու են նաև բիզնեսի, այդ թվում՝ մաքսային և հարկային ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրները և ներկայացվելու են Կառավարություն – Բիզնես – ՔՀԿ-ներ ֆորմատով քննարկումների ժամանակ հնչեցված կարևորագույն առաջարկությունները՝ ուղղված ոլորտներում բարեփոխումներ սկսելուն:

11. Ծրագրի մեկնարկից հետո և ավարտին կազմվել են մամլո հաղորդագրություններ (*հավելվածներ 14, 15, 16*) և տարածվել լրատվամիջոցներով՝ iravaban.net , Fortuna TV <http://fortunatv.am/post-820/> , Լոռու մարզ թերթի 2016թ. օգոստոսի 6-ի համար, որի առաջին էջում տպվել է տեղեկատվություն Կլոր սեղանի մասին (*հավելված 17*):

12. Ծրագրի վերահսկողությունն իրականացվել է ծրագրի ղեկավարի կողմից: Աշխատակազմի բոլոր անդամները ծրագրի ղեկավարին ներկայացրել են շաբաթական պլան հաշվետվություններ (*հավելված 2*): Շաբաթական մեկ անգամ՝ հիմնականում ուրբաթ օրերը, և ըստ անհրաժեշտության՝ հրավիրվել են աշխատանքային խորհրդակցություններ կամ աշխատանքային հանդիպումներ յուրաքանչյուր աշխատակցի, գործընկերոջ հետ:

13. Կլոր սեղանի արդյունքների ամփոփումից հետո սոցիոլոգիական հետազոտության և լրագրողական դիտարկումների, հարցախույզի և առցանց քննարկումների արդյունքների հիման վրա և գործող մաքսային օրենսդրության հետ համադրելով՝ գործավար-վերլուծաբան Արմեն Հովհաննիսյանը, իսկ այնուհետև՝ Դավիթ Հովսեփյանը, Վահագն Անտոնյանը ծրագրի ղեկավար Գ. Մանուկյանի ղեկավարությամբ կատարել են *ամփոփիչ վերլուծություն*՝ վերամշակելով ու վերախմբագրելով վեր հանված կոռուպցիոն ռիսկերը և մշակված հակակոռուպցիոն բարեփոխումների առաջարկները: Վեր հանված կոռուպցիոն ռիսկերը և հակակոռուպցիոն բարեփոխումների առաջարկները խմբավորվել են ըստ օրենսդրության, տեղեկատվության և վարչարարության ոլորտների: Մշակված Առաջարկները (*հավելված 18*) 2016թ. օգոստոսի 17-ի թիվ 45 գրությամբ (*հավելված 19*) ներկայացվել են ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Հովհաննես Հովսեփյանին և ԻՀԱ նախագահ Կարեն Զադոյանին:

Այսպիսով, իրականացվել են ծրագրային բոլոր գործողությունները և Ծրագիրը տվել է նախատեսված հետևյալ արդյունքները.

1. Բացահայտվել են ներկրվող ավտոմեքենաների մաքսազերծման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:
2. Մշակվել են սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով հիմնավորված հակակոռուպցիոն բարեփոխումների առաջարկներ, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ և ԻՀԱ Նախագահին:
3. 100 օրինակ տպաքանակով հրատարակվել է «Վասն Արդարութեան» գիտական հանդեսի 73-րդ համարի Հավելվածը, որտեղ տպագրված են *Հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանն ուղղված առաջարկներ*

մշակելու համար սոցիոլոգիական հետազոտության հաշվետվությունը և Լրագրողական դիտարկումների, հարցախույզի և առցանց քննարկումների արդյունքների ամփոփիչ զեկույցը:

4. ԻՀԱ-ի կողմից iravaban.net կայքում բացվել է կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագիր, որը ծրագրի ավարտից հետո շարունակում է գործել:
5. Բարձրացել է www.acrpc.am կայքէջի այցելուների, «Վասն Արդարության» հանդեսի, iravaban.net կայքէջի ընթերցողների, այցելուների իրազեկվածության մակարդակը Հայաստան ավտոմեքենա ներկրման դեպքում գործարքի գնի մեթոդով մաքսագերծման ընթացակարգի մասին.
- 5.1. Խնդրի վերաբերյալ բարձրացել է այն 52 շահառուների իրազեկությունը ովքեր թղթի վրա կամ առցանց լրացրել են անանուն հարցախույզի հարցաթերթիկները,
- 5.2. Բարձրացել է ՀՄԻԿ գործընկերների և կամավորների իրազեկության մակարդակը, ովքեր ստացել են ծրագրով տարածված մամլո հաղորդագրությունները,
- 5.3. Բարձրացել է «Լոռու մարզ» թերթի 2016թ. օգոստոսի 06-ի համարի ընթերցողների իրազեկության մակարդակը,
- 5.4. Բարձրացել է Ֆորտունա հեռուստաստուդիայի հեռուստադիտողների իրազեկության մակարդակը,
- 5.5. Բարձրացել է Վասն Արդարության հանդեսի 73-րդ համարի Հավելվածի ընթերցողների իրազեկության մակարդակը:

Որպես ծրագրով չնախատեսված ցայտուն արդյունք՝ կցանկանայինք նշել միայն այն, որ եթե ծրագրի սկզբում և՛ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի, և՛ Ավտոմաքսատան աշխատակիցները պարզապես ժխտում էին ոլորտում կոռուպցիոն ռիսկերի գոյությունը (<http://iravaban.net/130987.html>), (հավելված 8,) ապա ծրագրի ավարտին՝ Կլոր սեղան-քննարկման ժամանակ ՊԵԿ-ի Մաքսային վերահսկողության վարչության պետի տեղակալ Մհեր Մարտիրոսյանը «խոստովանեց», որ կոռուպցիան մեծ չարիք է պետության համար և կարևորեց խնդրո առարկա ոլորտում այդ չարիքի դեմ պայքարի անհրաժեշտությունը:

Գևորգ Մանուկյան

ՀՄԻԿ ՀԿ նախագահ

2016թ. օգոստոսի 29, ք. Վանաձոր

